Վիկտորյա Վասիլյան

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ֆորտունա, Կլեոպատրա, Արսինոյե II, Մարկոս Անտոնիոս, Հուլիոս Կեսար, Կիլիկիա, Կոմմագենե, Իսիդա, Էրատո, Տիգրան IV

Հելլենիստական ժամանակաշրջանից բազմաթիվ առասպելներ և պատմական ավանդություններ են մեզ փոխանցվել կանանց կողմից պետությունների ղեկավարման և գահակալության մասին: Անտիկ աշխարհում և Հին Եգիպտոսում շատ առասպելներ կային աստվածուհիների գերիշխանության և թագուհիների մենիշխանության վերաբերյալ:

Հելլենիստական քաղաքներում մեծ էր հունական դիցուհի Տյուխեի պաշտամունքը, որի պատկերագրությունը կարելի է տեսնել նաև հայոց թագավորական իշխանության ներկայացուցիչների դրամների վրա: Տյուխեի կերպարը լայնորեն տարածված էր հելլենիստական աշխարհում: Նա բախտի և ճակատագրի աստվածուհին էր, Օվկիանոսի և Թետիսի դուստրը: Նրան, որպես ճակատագրի աստվածուհի, համարում `էին հելլենիստական շրջանի թագավորների ու թագուհիների հովանավոր: Պատկերվել է որպես երիտասարդ կին՝ գնդի կամ անիվի վրա, մի ձեռքին նավի ղեկ, իսկ մյուսում՝ առատության եղջյուր: Տյուխեն նույնացվում էր հռոմեական Ֆորտունային, որը կայսրության շրջանում մեծարվում էր որպես մի շարք քաղաքների հովանավոր աստվածուհի: Հելլենիստական քաղաքները հունական և հռոմեական աստվածություններից կարող էին ընտրել «Քաղաքամայր դիցուհիներ». օրինակ այն տարածքներում, որտեղ հունական գաղութներ էին և մեծ էր հունական ազդեցությունը, Տյուխեի՝ Անտիոքի «Քաղաքամայր Անտիոքիայի» կերպարը կարող էր համատեղվել տեղական աստվածության և Աֆրոդիտե, Արտեմիս, Աթենաս աստվածությունների պաշտամունքի հետ, իսկ հռոմեական գաղութներում առավել մեծ էր Վեներայի պաշտամունքը որպես Հուլյանների տոհմի նախամայր, որը ներկայացվում էր Հռոմում գտնվող վերջինիս քանդակի պատկերագրությամբ:

Հելլենիստական ժամանակաշրջանում նաև մեծ տարածում ուներ Իսիդա աստվածուհու պաշտամունքը, որը Եգիպտոսի փարավոնների հովանավոր աստվածություն լինելուց բացի, կարող էր միաձուլվել տեղական աստվածության հատկանիշներին և հանդես գալ որպես և երկրի պահապան աստվածություն:

Կին-աստվածուհիների կերպարները որպես երկրի պահապաններ, հիմնականում դասակարգվում էին երկու խոշոր խմբերի.

ա. Երկրի հովանավոր նախամայր աստվածուհիներ

բ. Հայրենիքի և քաղաքի խնամակալ, գահակալ կույս դիցուհիներ

Բնականաբար, այս աստվածուհիներն ունեին իրենց բնորոշ պատկերագրությունը, որով տարբերակվում էին: Հելլենիստական ժամանակաշրջանում որպես քաղաքի պաշտպան կույս դիցուհու կերպար մեծարվում էր Աթենաս (*Պարֆենոս*, *Պրոմաքոս*)-Մինեռվան, իսկ Մայր աստվածուհու տիպով հանդես էր գալիս Աֆրոդիտե (*Ուրանիա*, *Պանդեմոս*)-Վեներան:

Հելլենիստական դարաշրջանում տարածված էր թագավորի և թագուհու պաշտամունքն ու աստվածացումը, քանի որ նա, ով կարող էր պետություն նվաճել, ստեղծել, կառուցել, իշխել, չէր կարող զուրկ լինել գերբնական ուժից: Եգիպտական փարավոնը հանդիսանում էր արևի աստծո որդին և դրա շնորհիվ ինքն էլ արևի, լույսի աստվածություն էր համարվում՝ աստվածների բարեխնամության շնորհիվ:

Հարկ է նշել, որ հելլենիստական ժամանակաշրջանում մի շարք թագուհիներ և իշխանուհիներ վերցրեցին այս դիցուհիների պատկերագրությունը և հանդես եկան որպես պետության հովանավորներ ու խնամակալներ: Բազմաթիվ են իշխանություն ունեցող կանանց օրինակները Հին աշխարհի պատմության մեջ. Հաթշեփսութ, Նեֆերտիտի, Արսինոյե, Բերենիկե, Կլեոպատրա, Ասպազիա, Զենոբիա և այլք: Հին Հայաստանի պատմության մեջ ևս քիչ չեն ուժեղ կանանց օրինակները. Խոսրովիդուխտ, Իոթափե, Սաթենիկ, Էրատո, Փառանձեմ, Մլքե, Կատրամիդե, Զաբել և այլն:

Հելլենիստական կին-միապետները և նրանց աղերսները հայկական դրամագիտության օրինակներին

Պոնտական, Բոսֆորյան, Եգիպտական թագավորությունների պատմության մեջ թագուհի-միապետները շատ կարևոր և նշանակալից տեղ են գրավել: Նրանց իշխանության ժամանակաշրջանը համընկավ հելլենիստական հնագույն միապետությունների փլուզման և նոր, աշխարհակալ տերության՝ Հռոմի ծաղկման ժամանակաշրջանին: Հռոմը ձգտում էր իրեն պարտված հելլենիստական պետությունների փոխարեն ստեղծել արևելյան տեղական, փոքր գաղութային միապետությունների համակարգ և դրանով պաշտպանել կայսրության շահերը:

Այդ նպատակով հռոմեացիները նպաստում էին այդ տարածքներում հելլենիստական ավանդույթների և բարոյական նորմերի պահպանմանը, որի հիմքում նախկին հելլենա-հունական մշակույթն էր՝ միախառնված տեղական ավանդույթների հետ: Տեղական ավանդույթների ազդեցությունը այնքանով էր պահպանվում, քանի դեռ վտանգի տակ չէր դնում կայսրության գերիշխանությունը:

Մերձսևծովյան տարածաշրջանում (Բոսֆոր, Կոլխիդա, Թրակիա, Իբերիա), Փոքր Ասիայում (Պոնտոս, Կապադովկիա, Կոմմագենե, Կիլիկիա), Առաջավոր Ասիայում (Միդիա, Կովկասյան Ալբանիա, Մեծ և Փոքր Հայք) հելլենիզմի պահպանմանը խթանում էին Հռոմի և Պարթևստանի երկարատև հակամարտությունները:

Վախենալով, որ պարթևներին կհաջողվի վերոնշյալ «փոքր» պետություններում իրենց իշխանությունը հաստատել, հռոմեացիները ակտիվորեն ազդում էին այս պետությունների դինաստիական քաղաքականության վրա՝ ձգտելով այս

տարածքներում գահ բարձրացնել իրենց դրածոներին և միապետներին, որոնք կվարեին հռոմեամետ քաղաքականություն: Մ.թ.ա. I – մ.թ. I դդ.-ի առաջին կեսին Առաջավոր Ասիայում և «փոքր» միապետություններում զարգանում էին վերոնշյալ գործընթացները, որոնք տեղի էին ունենում հելլենիստական ավանդույթների և նորմերի համաձայն[1]:

Պոնտոսի և Բոսֆորի թագավորությունների մշակույթը սերտորեն առնչվում էր հայկականին: Դա պայմանավորված էր ոչ միայն տարածքային մշակութային նույն գոտու և փոխազդեցության հանգամանքով, այլ դեռևս Տիգրան Մեծի կառավարման ժամանակաշրջանից դաշնակից պետություններ լինելով: Տիգրան Մեծը և Միհրդատ IV Եվպատորը բարեկամական կապի մեջ էին, քանի որ վերջինիս դուստրը Տիգրան Մեծի կինն էր: Բնական էր այս առումով, որ մշակութային տեսանկյունից տեղի էր ունենում ավանդույթների փոխառում և համատեղում:

Բոսֆորի և Պոնտոսի կին-միապետների **(Դինամիա, Պիֆադորիդա, Անտոնիա Տրիֆենա)** դրամային դիմապատկերները իրենց ամուսինների հետ որպես համակառավարիչներ, իրենց սանրվածքով, դիադեմաներով, զարդարանքով և անհատականացմամբ նման են էրատոյի և Տիգրան IV-ի դրամների պատկերագրությանը: Տիգրան IV-ի դրամների դարձերեսին ներկայացված էրատո թագուհին պատկերված է հռոմեական դրամներում հադիպող թագուհիների նման՝ Հուլիոս կայսեր կնոջ՝ Յուլիա Դոմնայի, Օգոստոսի կնոջ՝ Լիվիայի և Պտղոմեոսյան թագուհիներ՝ Կլեոպատրայի, Բերենիկեի, Արսինոյեի պատկերագրական առանձնահատկություններով և վերջիններիս բնորոշ հերահարդարանքով (Տե՛ս նկ. 7): Թագուհիները ներկայացվում էին ճակատը պսակող դիադեմաներով[2], որոշակիորեն անհատականացված դիմագծերով, ուսի վրա գցվող արքայական գիմատիոնով, ծոծորակի վրա հավաքվող ոլորուն հերահարդարանքով, մարգարտաշար մանյակներով և այլն:

Հելլենիստական շրջանի էրատոյի պատկերագրությունը համեմատելի է Կապադովկյան Անտիոքոս IV-ի կնոջ՝ Իոթափե թագուհու նկարագրին: Հերահարդարանքը՝ ծոծորակի շուրջ հավաքված մազերի սանրվածքով, ու դիմագծերի կատարման եղանակը համանման են:

Եգիպտոսից Հայաստան ներմուծված կնիքներն ու դրամները Պտղոմեոսյան թագուհիների պատկերագրությամբ

Կլեոպատրա VII-ը (մ.թ.ա. 70/69-30 թթ.)[3] Պտղոմեոսների տոհմից վերջինն էր[4]: Պտղոմեոսյանների դինաստիան հիմնադրվեց Ալեքսանդր Մեծի կողմից և Մակեդոնյան թագավորական տան ուժեղ կանանց ավանդույթները շարունակեց:

---

[1] С.Ю.Сапрыкин, женщины-правительницы понтийского и боспорского царств (Динамия, Пифодорида, Антония трифена), Женщина в античном мире, М., «Наука», 1995., 181-204:

[2] ճակատազարդ:

[3] А.Р.Сардарян, «100 Великих истории любви», 2006, стр. 29:

[4] Տե՛ս «Starke Frauen», Katalog, Staatliche Antikesammlungen München, 2012J., s. 241-243:

Ալեքսանդր Մակեդոնացու մորից՝ Օլիմպիայից սկսած մինչև Պալմիրայի Զենոբիա թագուհին, աչքի էին ընկնում իրենց ամուր կամքով և երկիրը ղեկավարելու հմտությամբ: Կլեոպատրան տիրապետում էր մի քանի լեզուների և այդ ամենի հետ մեկտեղ ներկայացվում է որպես հեռատեսությամբ և խելքով զորեղ թագուհի: Նա մեծ հետք թողեց պատմության մեջ և դասվեց այն կին թագուհիների շարքին, որոնք դեռ կենդանության օրոք կրում էին «Թագուհիների թագուհի» տիտղոսը: Նա հաճախ իր պատկերագրության մեջ հանդես էր գալիս Աֆրոդիտեի կամ Իզիդայի կերպարներում: Կլեոպատրային սիրահարված էին ժամանակի ամենախոշոր գործիչները՝ Հուլիոս կայսրը, Մարկոս Անտոնիոս զորավարը:

Երբ մ.թ.ա. 51 թ.-ին Եգիպտոս է ժամանում Հուլիոս կայսրը, Եգիպտոսից գանձվող պարտքերը Հռոմին վերադարձնելու համար, խորամանկ թագուհին զգեստավորվում է իր շքեղ հանդերձներով և հրամայում է, որ իրեն փաթաթեն արևելյան գորգի մեջ և նվեր մատուցեն Հուլիոս կայսերը: Վերջինս, չդիմանալով նրա հմայքին, սիրահարվում է և օգնում Կլեոպատրային դառնալ միապետ կառավարիչ և Եգիպտոսի թագուհի: Հուլիոս կայսրը ցանկանում էր ստեղծել անծայրածիր կայսրություն՝ գրավելով Դակիան, Պարթևստանը, Եգիպտոսը, որի արևելյան սահմանը պետք է ձգվեր մինչև Հնդկաստան: Կայսրության ղեկավար պետք է դառնար Հուլիոս կայսրը: Նա նպատակ ուներ ամուսնանալ Կլեոպատրայի հետ և կառավարել նրա հետ համատեղ: Հուլիոս կայսեր հրամանով Կլեոպատրան իր որդու հետ տեղափոխվում է Հռոմ, որն էլ հռոմեացիների մեջ ստեղծում է այն կարծիքը, որ վերջինս նպատակադրվել է հսկայածավալ կայսրության մայրաքաղաքը Հռոմից տեղափոխել Ալեքսանդրիա: Այս լուրերը չէին ժխտվում կայսեր կողմից, ինչի պատճառով էլ մ.թ.ա. 44 թ.-ի մարտի 15-ին սենատի անդամների դավադրությամբ նա դաժանաբար դանակահարվում է հենց իր ազգականների կողմից: Սակայն երբ բացում են Հուլիոս կայսեր կտակը, նա իր ողջ ժառանգությունը թողել էր իր եղբորորդի Օկտավիանոսին, իսկ իր որդու՝ Ցեզարիոնի և Կլեոպատրայի ժառանգության մասին ոչինչ չկար: Վախեցած եգիպտական թագուհին վերցնում է որդուն և վերադառնում է Եգիպտոս: Սակայն խորաթափանց թագուհին Հռոմի զավթումներից Եգիպտոսը փրկելու համար սիրային կապի մեջ է մտնում հռոմեական նշանավոր զորավար Մարկոս Անտոնիոսի հետ:

Անտոնիոս Անտոնիոսի[1] հետ իր առաջին հանդիպումը Կլեոպատրան կազմակերպում է Կիլիկիայի մերձափնյա տարածքում, որն էլ վերածում է իր պատվին «քարոզչական ներկայացման». «Ոսկեզօծ նավախելով նավակի մեջ...թագուհին հանգչում էր ոսկեթել ծածկոցի մեջ՝ Աֆրոդիտեի թագով...իսկ օթյակի երկու կողմերում կանգնած էին տղաներ՝ հովհարներով՝ ինչպես էրոսները նկարում...Ամենուր լուրեր տարածվեցին, որ Աֆրոդիտեն գնում է Դիոնիսոսի մոտ՝ ի բարօրություն Ասիայ»[2]:

Այս ժամանակաշրջանը Հայաստանում համընկնում է Արտավազդ արքայի իշխանության հետ: Վերջինս աչքի էր ընկնում իր արվեստասիրությամբ, գրում և

---

[1] Плутарх Цезарь, LX, Сравнительные жизнеописания, Том 2, М, 1963г, Пер. Г.А. Стратаножского, К.П. Лампсакова:

[2] Տե՛ս նույն տեղում:

բեմադրում էր ողբերգություններ: Սակայն վերջինս իր ընտանիքի հետ միասին զոհ է գնում Անտոնիոսի և Կլեոպատրայի խարդավանքներին: Քանի որ չի կամենում ընդունել նրա աստվածային ծագումն ու գերիշխանությունը, Արտավազդը իր ընտանիքի հետ ոսկեզօծ շղթաներով գերի է տարվում Ալեքսանդրիա և գերության մեջ էլ մահանում[1]:

Հայտնի է, որ Մարկոս Անտոնիոսը Հայաստանից վերադառնալով Եգիպտոս, մ.թ.ա. 34 թվին Ալեքսանդրիայում, իբրև նոր աշխարհակալ տերության հիմնադիր, բաժանում է Արևելյան երկրները իր ժառանգներին: Եգիպտոսում թագուհի Կլեոպատրայից ծնված վեցամյա Ալեքսանդր որդուն նա հատկացրել էր Հայաստանը՝ հայտարարելով նրան միաժամանակ Մեդիայի և Պարթևաց թագավոր[2]: Հայաստանի նվաճման առիթով մ.թ.ա. 32-31թթ. Մարկոս Անտոնիոսը հրամայում է կռել դրամներ՝ իր և Կլեոպատրայի կամ էլ իր և «Պարտված Հայաստանը՝ ծնկաչոք հայ թագուհու» պատկերագրությամբ: Ըստ էության հռոմեական դրամների վրա առաջին անգամ ներկայացվեց Հայաստանի նվաճման մասին հայտարարություն հենց Մարկոս Անտոնիոսից սկսած[3]: Հատկանշական է, որ հենց Հռոմից սկսվեց Հայաստանի խորհրդանշական պատկերումը թագուհու հավաքական կերպարով: Առավել հետաքրքրական էր այն, որ Հռոմը իրեն ենթակա գերված տերությունները գծագրվեցին ամբողջական քարտեզի տեսքով արդեն հելլենիստական խճանկարներում, որտեղ տարածաշրջանները ներկայացվեցին առանձին անձնավորումների տեսքով, այստեղ էլ Հայատանին բաժին ընկավ «Պարտված թագուհու» անձնավորումը[4]:

---

[1] Տե՛ս Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. Vդ. -մ.թ. XIVդ.), Երևան, 1982, էջ 91-93:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 91:

[3] Սակայն Անտոնիոսին և Կլեոպատրային նույնպես ողբերգական վախճան էր սպասվում: Անտոնիոսի կինը, իմանալով նրա և Կլեոպատրայի սիրային կապի մասին սգից մահանում է, զորավարը ցանկանում է ամուսնանալ Կլեոպատրայի հետ, սակայն դրա դեմ է դուրս գալիս Օկտավիանոսը, որի քրոջ հետ էլ քաղաքական նկատառումներից դրդված, ամուսնանում է Անտոնիոսը: Ամուսնությունից անմիջապես հետո նա շտապում է Սիրիա, որտեղ էլ գտնվում էր նրա սիրուհին: Վերջինիս քմահաճությունը կատարելով՝ մ.թ.ա. 37թ. ամուսնանում է: Որպես հարսանեկան նվեր՝ Անտոնիոսը սիրուհու հետ մեկտեղ ամուսնական ճամփորդության է մեկնում Կիպրոս, Փյունիկինա, Կիլիկիա:

[4] Հայաստանը «Պարտված Արմենիայի» կերպարով ներկայացվեց հռոմեական հաջորդող կայսրերի կողմից դրմաների և քանդակների պատկերագրության մեջ, որոնք շարունակեցին Մարկոս Անտոնիոսից ծագող ավանդույթը: Այսպիսի մի քանդակ կռվեց Ադրիանոս կայսեր ժամանակաշրջանում և այժմ գտնվում է Նեապոլի Պոսեյդոնյան սրահում: Քանի որ մեր հարցադրումը այլ բնույթ է կրում, այս հարցին առավել հանգամանորեին կանդրադառնանք մեր հաջորդ աշխատության մեջ:

Հայաստանում[1]
Արսինոյա II Ֆիլադելֆոսի պատկերով՝ կանաչավուն ապակուց կնիք՝ Իտալիայից, Ք.ա. III-IIդդ, 1979թ.[2] գտնված Արտաշատից, «Քաղաքամայր դիցուհու» տիպով, այժմ պահվում է ՀՊԹ-ում[3]: Այսպիսի կնիքներն ու դրամները մեծ տեղ ունեին հելլենիստական ժամանակաշրջանում Պտղոմեոսյան թագուհիների պատկերագրության մեջ: Սիրված կերպարներ էին հատկապես Բերենիկե II-ը, Արսինոյե II-ը, Կլոեպատրա VII-ը:

Ըստ էության Իսիս-Աֆրոդիտեն Պերինթոսում նույնացվեց մահացած Պտղոմեոսյան թագուհի Արսինոյե II-ի հետ (Ք.ա.316-270): Արդեն կենդանության օրոք նա իր ամուսին Պտղոմեոս Ֆիլադելփոսի հետ կոչվում էին քույր և եղբայր աստվածներ: Համաձայն Պտղոմեոսյան ավանդույթի՝ Արսինոյե II-ը իր մահից հետո հարություն առավ աստվածների քաղաքում և ստացավ Արսինոյե-Աֆրոդիտե անունը: Այս մասին մենք մի անհատական նվերից ենք տեղեկանում, որը նրան ընծա է մատուցել Կալլիկրատես անունով մի ծովակալ՝ արևելահունական Սամոս քաղաքից և Ալեքսանդրիայից արևելք ընկած Կապ քաղաքում՝ Ցեպիռոնում, վերջինս մի պաշտամունքային վայր կառուցեց: Աստվածացված Արսինոյե-Աֆրոդիտեն այդ տաճարում երկու գործառույթներ էր իրականացնում՝ ա) Ալեքսանդրիայից հույն աղջիկների վազքի տեղի պահապան և հովանավոր աստվածություն բ)հովանավորուհի նավագնացների համար:

Արսինոյե II-ի խորհրդանիշը երկու առատության եղջյուրներն էին: Առատության եղջյուրը մինչ այժմ համարվում է աստվածային բարեգործության և պտղաբերության նշան. հատկանիշները, որոնցով նաև եգիպտական Իսիդա և Խատոր աստվածուհիներն էին օժտված:

---

[1] «Aphrodite- Herrin des Krieges. Göttin der Liebe», Hrsg. von Martina Seifert, Mainz, 2009J, s. 111-125:

[2] Տե՛ս «Armen'ie Tre'sors de l'Arme'nie ancienne des origins au IVe sie`cle», Paris, 1996, 221:

[3] Հասմիկ Մանուկյան, Արտաշատից հայտնաբերված հելլենիստական շրջանի պորտրետային կնիք, Լրաբեր, 1985, No 8, 52-58

Արսինոյե II-ի նույնացումը ոչ միայն Աֆրոդիտեի, այլև Իսիդայի հետ ցույց են տալիս նվիրատվական արձանագրությունները մինչև Ք.ա. I դարը: Ըստ հին եգիպտական ավանդույթի՝ Իսիսը՝ Գոռի մայր, հանդես է գալիս միաժամանակ որպես փարավոնների մայր: Հախճապակուց մի աման այսպես կոչված «Պտղոմեոսների աման» Կանոսիայից(Ապուլեյա) պահվում է այժմ Բրիտանական թանգարանում: Ներկայացնում է Արսինոյե II-ին միաժամանակ որպես քաղաքային աստվածուհի՝ «Աֆրոդիտե-Իսիս-Տյուխե» տիպով: Նա հանդես է գալիս իր կրկնակի առատության եղջյուրներով՝ զոհասեղանի և սյան միջակայքում:

Արտաշատ հնավայրի պեղումներից հայտնաբերվել են «եգիպտական աստվածների» պատկերներով հելլենիստական կնիքներ: Ենթադրվում է, որ նրանք արտացոլում են Կլեոպատրա թագուհուն: Կլեոպատրա թագուհու և Մարկոս Անտոնիոսի պատկերագրությամբ Հայաստանում հայտնաբերվել են նաև դրամներ, որոնց վրա մակագրված է ***«Կլեոպատրա-թագավորների և իր որդիների թագավորության թագուհի»***[1]

Հայտնի է, որ եգիպտական թագուհին մարդկանց ներկայանում էր Իսիդայի սրբազան հանդերձներով[2] և ինքն էլ իրեն կոչում էր «Նոր Իսիդա»[3]: Բացի դրամներից՝ առավել մեծաքանակ են Կլեոպատրա VII-ի պատկերագրությամբ քորոցները, որտեղ նա ներկայանում է Աֆրոդիտեի և Իսիդայի կերպարներով: Դրանցից մեկի վրա նա պատկերված է Աֆրոդիտեի կերպարանքով՝ էրոսը ուսին: Էրոսի կերպարում հանդես է գալիս նրա որդի Ցեզարիոնը: Սյան մոտ կանգնած՝ աստվածուհու նրբագեղ մարմինը և դեպի նա թռչող դափնեպսակով էրոսի պատկերագրությունը տարածված էր ոչ միայն դրոշմների, այլև հելլենիստական աշխարհի պատկերագրության մեջ և բազմիցս կրկնօրինակվել է հելլենիստական վարպետների կողմից: Հելլենիզմի դարաշրջանում տարածված էր աստվածուհիների կերպարներով թագուհիների հանդես գալը[4]: Արտաշատից հայտնաբերված մի կնիքի վրա Կլեոպատրա-Իսիդան պատկերված է նստած՝ երեխան ծնկներին: Ինչպես հայտնի է, Իսիդայի և Գոռի այս պատկերագրությունը քրիստոնեության շրջանում վերածվել է Տիրամոր՝ Քրիստոսի ստնտու մոր պատկերի:

---

[1] Մ.թ.ա. 34 թ, Կլեոպատրային է շնորհվում «Թագուհիների թագուհի» տիտղոսը:

[2] Կլեոպատրան, ընկնելով Օգոստոսի իշխանության տակ և դառնալով նրա գերին, իր բախտորոշիչ պահին է սպասում պալատում: Իր ծառաներից տեղեկանում է, որ Օկտավիանոսը նպատակադրվել է Հռոմում հաղթարշավ կազմակերպել և Կլեոպատրային շղթաներով պտտեցնել քաղաքով: Չհանդուրժելով նման ստորացումը, նա թաքուն մտնում է դեռևս մի քանի տարի առաջ կառուցված իր ննջասենյակ-դամբարանը և կոբրայի խայթոցից մահանում:

[3] Плутарх Антоний, LIV, Сравнительные жизнеописания, том 2, М, 1963г, Пер. Г.А. Стратаножского, К.П. Лампсакова:

[4] Հատկանշական է, որ կենդանության օրոք նա իր վարքով նմանվեց վերոհիշյալ սիրո դիցուհիներին, նույնպիսի ռազմատենչ վարք դրսևորեց և ձգտեց հագուրդ տալ իր քաղաքական նկրտումներին:

Կլեոպատրայի կերպարով դրամներ են հայտնաբերվել, որտեղ նա պատկերված է կանգնած՝ Իզիդա-Տյուխեի կերպարով[1]: Հետաքրքիր են Իսիդա-Տյուխե-Աֆրոդիտե[2] խառնուրդային կերպարով դրամները՝ էրոսի հետ, ինչպես նաև թևավոր Իզիդա-Տյուխե-Նիկեն: Արտաշատից հայտնաբերված այս դրոշմները կատարել են Ալեքսանդրիայի վարպետները: Եգիպտական ծագում ունեցող այս դրամներից ամենահետաքրքիրը բազմիցս կրկնված դրոշմվածքն է. ներկայացված է կանացի կիսանդրի՝ բնորոշ Պտղոմեոսյան ***«melonen-frisur»***-ով, շքեղ կրծքազարդով և ուսին թառած փոքրիկ էրոսը: Նրա շրթունքներին սիրալիր ժպիտ է: Այս պատկերները Ժ.Խաչատրյանի կարծիքով կարելի է համեմատել Հուլիոս կայսեր կողմից պատվիրված դրամների հետ՝ կատարված Արկեսիլայոս Կիրենացու կողմից: Մ.թ.ա. 46 թ. վարպետը հռոմեացի տիրակալի համար կատարում է «Վեներա Նախամոր» արձանը և այն կանգնեցնում են Վեներայի հիշատակված տաճարում՝ կայսեր հրապարակում: Դիտարկելով հռոմեական դրամներն ու քանդակային կրկնօրինակումները՝ սիրո դիցուհին այս արձաններում և դրամների վրա որպես Հուլյանների տոհմի նախամայր և ազգի ծնող, ներկայացված է հագուստով: Սակայն կայսեր և Արկեսիլաոսի համար և՛ դրդապատճառները և՛ քաղաքական նկրտումները համընկան այս իրադարձության հետ: Մ.թ.ա. 47 թ. թագուհին Հուլիոս կայսրից ծնում է որդի, որին կոչում են վերջինիս պատվին Պտղոմեոսյան Ցեզարիոն ու ճանաչում դիկտատոր: Առավել ուշ՝ Պտղոմեոս XV անվան տակ նա համարվում է մոր հետ համակառավարիչ, իսկ մ.թ.ա. 30թ. Օկտավիանոս Օգոստոսի կողմից սպանվում է:

«Նոր Աֆրոդիտեի» ծնած էրոս-Ցեզարոնի ծնունդն էին խորհրդանշում արտաշատյան դրոշմները: Դրանց զուգահեռը հանդիսանում են բրոնզյա դրամները՝ կատարված մ.թ.ա. 47 թ. Կիպրոս կղզում. Կլեոպատրայի գլուխը զարդարում է ստեֆանան: Նրա գրկում՝ կրծքին մոտ, նորածին երեխան է պատկերված, իսկ ուսին կապարծն է: Երկու արտաշատյան դրոշմների վրա համաժամանակյա երեխայի կիսադեմով դիմաքանդակներ են՝ ուսերին թևիկներով, իսկ մյուսի վրա արդեն մեծացած էրոս-Ցեզարոնն[3] է պատկերված դիմահայաց՝ սիրո աստծո հերմայի տեսքով: Այս պատկերին համանման պատկերներ չեն հանդիպում՝ չհաշված Օսլոյից հատնաբերված թագակիր տղայի մարմարյա գլխաքանդակները, որոնք Ջ. Ռիխտերը[4] համարել է Ցեզարոնի դիմաքանդակներ:

---

[1] Ըստ եգիպտական հավատալիքների՝ վերջինիս խայթոցը նրան պետք է տաներ հանդերձյալ աշխարհ և վերածներ որպես «Նոր Իզիդա»: Օկտավիանոսին թողնված իր նամակում թագուհին խնդրում էր իրեն՝ որպես Պտղոմեոսների դինաստիայի վերջին ժառանգորդ և վերջինը այդ տոհմից, թաղել թագավորական պալատում՝ իր ամուսին Մարկոս Անտոնիոսի կողքին: Այսպիսով, Ակցիումի պատերազմից հետո՝ մ.թ.ա. 31 թ., իր մահկանացուն է կնքում երբեմնի հզոր կանանցից մեկը, որը իր իշխանության շրջանում ձգտում էր որպես անմահ աստվածուհի կառավարել, երկրի վրա «Նոր Աֆրոդիտե կամ Իզիդա», որի շուրջը այնուհետև հյուսվեցին բազմաթիվ լեգենդներ:

[2] Տե՛ս Ж. Хачатрян, О. Неверов, Архивы столицы Дребней Армении Арташата, Ереван, 2008г, стр. 114:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 116:

[4] G.M.A. Richter, “The Portraits of the Greeks”, III, 1965, fig. 1860:

Իտալացի ընթերցողին հռոմեացի պատմիչ Վերգիլիոսը[1] ներկայացնում է Ակցիումի պատերազմը որպես եգիպտական և հռոմեական աստվածների մարտ. «Տարբեր աստվածների հրեշները և դժնդակ ոռնացող Անուբիսը՝ ընդդեմ թագավոր Նեպտունի, Վեներայի և Մինեռվայի»: Այս պատկերագրությունը հանդիպում ենք նաև արտաշատյան կնիքների վրա, որոնց նպատակը Կլեոպատրային պրոպագանդելն էր:

Ինչպես արդեն վերը նշվեց,Պտղոմեոսյան դինաստիայի թագուհիների պատկերներով բազմաթիվ դրամներ և կնիքներ են մեզ հասել հելլենիստական Արտաշատի տարածքից: Պատկերագրությամբ դրանք հիմնականում համանման են՝ հերահարդարանքի, ճակատազարդ հանգույցի, հունական գիմատիոնի, հռոմեական դիմագծերի առումով: Քանի որ Արտավազդի իշխանության ժամանակահատվածում կարճ ժամանակով Հայաստանը գտնվում էր Հռոմի գեհիշխանության տակ, իսկ Անտոնիոսը Եգիպտոսում «Պարտված Հայաստանը» մակագրությամբ դրամներ էր թողարկում, այս դրամները կարող էին Արտաշատ հասնել այդ նկատառումներով[2]:

Հելլենիստական դարաշրջանում տարածված էր թագավորի և թագուհու պաշտամունքն ու աստվածացումը, քանի որ նա, ով կարող էր պետություն նվաճել, ստեղծել, կառուցել, իշխել, չէր կարող զուրկ լինել գերբնական ուժից: Եգիպտական փարավոնը հանդիսանում էր արևի աստծո որդին և դրա շնորհիվ ինքն էլ արևի, լույսի աստվածություն էր համարվում՝ աստվածների բարեխնամության շնորհիվ:

Ինչ վերաբերում էր հայկական պատկերագրության մեջ Էրատո թագուհու և Տիգրան IV-ի պատկերագրմանը, ապա նրանք կենդանության ժամանակ պաշտվել են որպես կենդանի աստվածներ և իրենց համեմատականները ունեն Պտղոմեոսյան դինաստիայի ներկայացուցիչների հետ: Արտաշատից գտնված 10 պղնձյա դրամների դիմերեսին Էրատո թագուհին ներկայացված է կիսադեմով դեպի աջ ուղղված, իր եղբայր և ամուսին Տիգրան IV-ի կողքին, հետին պլանում՝ հայկական ատամնավոր թագերով, իսկ դրամների դարձերեսին ներկայացված է Արարատ լեռը (Տե՛ս նկ. 13)[3]: Մեր կարծիքով այդ դրամները որոշ հատկանիշներով նմանվում են Պտղոմեոսյանների պատկերագրությանը:

Հատկապես կրոնի հետ իրենց կապվածությամբ Պտղոմեոսյան թագուհիները Եգիպտոսի բնակչության կողմից սիրված էին: Քանի որ նրանք իրենց նույնացնում էին եգիպտական Իսիդա աստվածուհուն՝ Գոռի մոր, որը բացի այդ ըստ հին եգիպտական ավանդության փարավոնների, երկրային Գոռերի նախամայրն էր համարվում:

Եգիպտական Իսիդայի արտաքին տեսքը Պտղոմեոսյանների դինաստիայի կառավարման շրջանում փոխվեց և հարմարեցվեց հունական ավանդույթներին և պատկերագրությանը: Այնուամենայնիվ, նրանց հին եգիպտական հարդարանքը և պաշտամունքային մի քանի ավանդույթները մնացին անփոփոխ: Շուտով Իսիդան Աֆրոդիտեի հետ նույնացվեց, երկու աստվածուհիները կապվեցին

---

[1] Вергилий, Энеида, VIII, 698, сл. Пер. С.Шервинского и С. Ошерова, М., 1979г.:

[2] Տե՛ս Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Ա հատոր, Երևան, 2013թ., Վիկտորյա Վասիլյան, Մայր Հայաստանի հնագույն նախատիպերը, էջ 209-215:

[3] Տե՛ս Ռ. Վարդանյան, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ, No 2, Եր., 2004, 234-253:

համապատասխան կերպարային հատկանիշներով, որոնք էլ ժառանգեցին Պտղոմեոսյան թագուհիները: Ի հակադրություն ուրիշ հելլենիստական թագուհիների, Պտղոմեոսյան թագուհիները Եգիպտոսում պետության փաստացի խնալակալներ էին՝ հատկապես Պտղոմեոսների դինաստիայի կառավարման վերջին ժամանակաշրջանում: Նրանք գործուն նշանակություն ունեին երկրի սոցիալական, քաղաքական, կրոնական կառուցվածքում: Ֆինանսապես նրանք այնպիսի անկախություն էին վայելում, որ ուրիշ երկրների թագուհիներ երբեք չեն ունեցել:

1. *Բրոնզյա դրամի վրա ներկայացված է «Աֆրոդիտե-քաղաքամայր» դիցուհին, որի դարձերեսին Հաղթանակի Նիկե աստվածուհին է, որը քայլում է դեպի Աֆրոդիտեն: Կան հունարեն արձանագրություններ՝ կռված հունական գաղութներում: Գտնվել է ներկայիս Թուրքիայի տարածքից:*

2. *Բրոնզից մանրադրամի վրա ներկայացված է «Տյուխե-քաղաքամայր» դիցուհին, որի դարձերեսին գրչության աստված Ապոլոնն է:*

3. Բրոնզե դրամը գտնվել է հունական Նագիդոս քաղաքից, Կիլիկիայի տարածքից մ.թ.ա. 380-360թթ.: Դրամի առջևի երեսին պատկերված է Տյուխեն՝ հունական դիմագծերով՝ պսակված եռամաս աշտարակաձև թագով, իսկ դարձերեսին՝ աստվածների հայրը՝ Զևսը՝ նման Ֆիդիասի ստեղծած քանդակին՝ գահին բազմած և ձեռքին արծիվ:

4. Արտաշատ մայրաքաղաքից գտնված «Արտաշատ-քաղաքամայր դիցուհու» պղնձից քաղկոսը, մ.թ.ա. 2դ., որի դարձերեսին ներկայացված է Հաղթանակի Վիկտորյա աստվածուհին:

5. «Պլավտիուսի դենարը» Կիբելե Մայր աստվածուհու պատկերով, պահվում է Նյու Յորքում:

6. Բրոնզե մանրադրամի դիմերեսին Անտիոքի «քաղաքամայր դիցուհի Տյուխեն է Աթենասի կերպարով» հունարեն արձանագրություններով, գտնված ներկայիս Թուրքիայի տարածքից, որի դարձերեսին Հաղթանակի աստվածուհին է:

7. Կլեոպատրայի պղնձե և արծաթե մանրադրամները՝ գտնված հելլենիստական Արտաշատից և Մակեդոնիայի տարածքից, մ.թ.ա. 32-31 թթ.:

8. Իոթափե թագուհու՝ Անտիոքոս IV-ի կնոջ մանրադրամ, պղինձ, մ.թ.ա. 1 դ.:

9. «Քաղաքամայր դիցուհու» պատկերագրությամբ ոսկյա մանրադրամ և թագուհի-աստվածուհու ոսկյա մեդալյոն՝ գտնված հելլենիստական Մակեդոնիայի տարածքից, մ.թ.ա.3-2 դդ.:

10. Մակեդոնյան արծաթյա մանրադրամ «քաղաքամայր դիցուհու» պատկերագրությամբ, մ.թ.ա. 2 դ.:

11. Անտիոքի քաղաքամայր Անտիոքիա-Տյուխե դիցուհին՝ քաղաքի 4 աշտարակները ներկայացնող թագով, ձեռքին ցորենի հասկեր: Օրոնտես գետի անձնավորումը՝ մերկ տղամադու այլաբանությամբ նրա ոտքերի տակ, մ.թ.ա. 3 դ., Էվտիխիդի մարմարյա արձան, կրկնօրինակ, Հռոմ, Վատիկան:

12. Տիգրան Մեծի մանրադրամը, մ.թ.ա. 95-55 թթ., դիմերեսին՝ Տիգրանի դիմապատկերը, դարձերեսին՝ Անտիոքի «քաղաքամայր դիցուհին» հայտնի քանդակից կրկնօրինակմամբ:

Ա.

Բ.



Գ.

13. Արտաշատից գտնված Տիգրան Մեծի և Էրատոյի պատկերագրությամբ մետաղադրամներ, (մ.թ.ա. 2-1 դդ), դարձերեսին Արարատի և հելլենիստական Արտաշատ մայրաքաղաքի նկարներով:

Վիկտորյա Վասիլյան, Հելլենիստական թագուհիները անտիկ Հայաստանում – Հոդվածում քննարկվում են հելլենիստական ժամանակաշրջանի նշանավոր թագուհիների կերպարները և նրանց առնչությունը Հայաստանին: Հելլենիստական Արտաշատի պեղումներից գտնվել են դրամներ և կնիքներ Պտղոմեոսյան թագուհիներ՝ Արսինոյե II-ի, Կլեոպատրա VII-ի պատկերագրով: Հատկանշական է, որ հելլենիստական դարշրջանում ստեղծված հայկական դրամները՝ Էրատոյի և Տիգրան IV-ի դիմապատկերներով, բավականին նման են Պտղոմեոսյան թագավորի և թագուհու պատկերագրությանը:

Виктория Василян, Эллинистические царицы в античной Армении – В статье рассматриваются портретные изображения знаменитых эллинистических цариц, их иконографические и исторические связи с Арменией. Из раскопок Арташата (эллинистический период) были найдены монеты и геммы с портретными изображениями цариц Арсинои II, Клеопатры VII из династии Птолемеев. Примечательно, что изображения Эрато и Тиграна VI на армянских монетах эллинистического периода довольно похожи на изображения царя и царицы из династии Птолемеев.

Viktorya Vasilyan, Hellenistic queens in Antient Armenia – In this article we discuss portraits of the famous Hellenistic queens, their iconographic and historical relations to Armenia. Coins and gems with the portraits of the queens Arsinoe II, Cleopatra VII of the Ptolemaic dynasty on them were found during the excavations of Artashat (Hellenistic period). It is noteworthy, that the portraits of Erato and Tigran VI on Armenian Hellenistic coins are quite similar to the portraits of the king and the queen of the Ptolemaic dynasty.

Վիկտորյա Վասիլյան – ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս,
Արվեստի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ